ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2016 թվականի N242 -Ա ք.Գյումրի

ԿԱՐԱՊԵՏ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N 17 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N1354-Ն որոշման համաձայն «Գյումրու N 17 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման ձևով միացվել է «Գյումրու ակադեմիական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, և համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2016 թվականի փետրվարի 22-ի տեղեկանքի՝ նշված օրվանից դադարեցվել է «Գյումրու N 17 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը և կազմակերպությունը հանվել է իրավաբանական անձանց պետական գրանցումից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 126-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

2016 թվականի փետրվարի 22-ից Կարապետ Ներսիսյանին ազատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 17 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2011 թվականի նոյեմբերի 25-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է